

ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԵՎ ԱՆՁՐԵՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՈՒՄ

1. Ոռոգման կաթիլային եղանակը, որն արդյունավետ է հատկապես բանջարաբոստանային մշակաբուսերի ու բազմամյա տնկարկների ոռոգման համար, ունի հետևյալ առավելությունները.

1) կաթիլային ոռոգումը թույլ է տալիս ապահովել պարարտանյութերի մատուցումը ոռոգման ջրի հետ միասին բույսի աճի համար անհրաժեշտ տարբեր փուլերում, պարարտանյութերի ծախսը կրճատվում է 50%-ով,

2) ոռոգման տարածքի սահմանափակ խոնավեցումը չի խանգարում գյուղատնտեսական մեքենաների աշխատանքին, ոռոգումից հետո հողի չորացմանը սպասելու անհրաժեշտություն չի առաջանում, բոլոր գյուղատնտեսական աշխատանքները կարելի է կատարել օպտիմալ ժամանակում,

3) կաթիլային ոռոգումը բացառում է մակերևութային հոսքը, այսինքն կանխում է հողի ջրային էրոզիան, հետևաբար այսպիսի ոռոգման համակարգը կարելի է օգտագործել անգամ զառիթափ լանջերում, անհարթ հատվածներում, ոչ կանոնավոր հողատարածքներում և այլն,

4) քանի որ միջջրային տարածությունը մնում է չոր, հեշտանում է պայքարը մոլախոտերի դեմ, բացի դրանից հնարավորություն է ստեղծվում ոռոգման ցանցի միջոցով օգտագործել հերբիցիդներ առանց ավելորդ աշխատանքների,

5) կաթիլային ոռոգման ժամանակ վեգետացիոն զանգվածի և պտղի խոնավեցում տեղի չի ունենում, ինչն ունի էական նշանակություն հիվանդությունների կանխման և բարձրորակ բերքի ստացման գործում և այլն:

ԱՆՁՐԵՎԱՑՈՒՄ

2. Ոռոգման անձրևացման եղանակը, որն արդյունավետ է հատկապես կարտոֆիլի, կերային և հացահատիկային, ինչպես նաև մի շարք բանջարաբոստանային մշակաբուսերի ոռոգման համար, ունի հետևյալ առավելությունները.

1) ջրման գործընթացը մեքենայացված է և հնարավոր է ավտոմատացնել այն,

2) ջրման նորմերի կրճատման հետ միասին կրճատվում են նաև ջրի մատակարարման համար անհրաժեշտ էներգածախսերը,

3) չկա ժամանակավոր ջրանցքների կառուցման անհրաժեշտություն՝ բացակայում են ջրի տեղափոխման կորուստները,

4) հնարավոր է կարգավորել խոնավացվող շերտի խորությունը, ինչը շատ կարևոր է ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի և հողերի փոքր հզորության պայմաններում,

5) հնարավոր է կիրառել տնկման (ցանքի) բարձր խտությամբ մշակաբույսերի համար,

6) խոնավանում է ոչ միայն հողը, այլև գետնամերձ օդի շերտը, բույսի համար ստեղծելով բարենպաստ միկրոկլիմայական պայմաններ,

7) անձրևացման միջոցով հնարավոր է իրականացնել տերևային պարարտացում, որը հանգեցնում է պարարտանյութերի առավել արդյունավետ օգտագործմանը,

8) կարելի է կիրառել վաղ գարնանային և ուշ աշնանային ցրտահարությունների դեմ պայքարի նպատակով,

9) հողի հավասարաչափ խոնավեցման շնորհիվ բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը, լավանում է բերքի որակը: